



COVID-19. պատվաստվելուց հետո

Պատվաստանյութի հիմնական կողմնակի ազդեցությունները

- COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո կողմնակի ազդեցությունները տարբեր մարդկանց մոտ կարող են տարբեր լինել: Որոշ մարդիկ ունենում են մի թեթև անհարմարության զգացողություն և կարող են իրենց օրն անցկացնել սովորականի նման: Այլ մարդիկ ունենում են այնպիսի կողմնակի ազդեցություններ, որոնք ազդում են իրենց ամենօրյա գործողությունների վրա:
- Սովորաբար կողմնակի ազդեցություններն անհետանում են մի քանի օրվա ընթացքում:
- Նույնիսկ եթե դուք չեք ունենում կողմնակի ազդեցություններ, ձեր մարմինը ստեղծում է պաշտպանվածություն այն վիրուսից, որն առաջացնում է COVID-19:
- Կողմնակի ազդեցությունները ներառում են ցավ, այտուց և կարմրություն թևի կամ ազդրի այն հատվածում, որտեղ պատվաստանյութը ներարկվել է: Այլ հևարավոր կողմնակի ազդեցություններից են ջերմությունը, դողը, մկանների կամ հոդերի ցավը, ավշային հանգույցների այտուցումը, գլխացավը, սրտխառնոցը և հոգևածության զգացողությունը: Փոքրիկ երեխաները կարող են դուրսգալ կամ քնկոտ լինել, լացել կամ կորցնել ախորժակը:
- Եթե ձեզ պատվաստողը կամ ձեր բժիշկը չի ասում հակառակն անել, կարևոր է ստանալ պատվաստանյութի բոլոր առաջարկվող դեղաչափերը, նույնիսկ եթե նախորդ դեղաչափերը ստանալիս ունեցել եք կողմնակի ազդեցություններ:

Խորհուրդներ, որոնք կօգնեն կողմնակի ազդեցությունների ժամանակ

- Ձեր թևին կամ ազդրին դրեք մաքուր, սառը, խոնավ կտոր՝ ցավը թուլացնելու համար: Վերջույթները շարժելը կամ շարժվելը նույնպես կարող են օգնել:
- Եթե ջերմություն ունեք, շատ հեղուկ խմեք և կրեք թեթև հագուստ:
- Խոսեք ձեր բժշկի հետ առանց դեղատոմսի վաճառվող դեղամիջոցների մասին, ինչպես օրինակ՝ ացետամինոֆենի (Tylenol®) կամ իբուպրոֆենի (Motrin® կամ Advil®): Այդ դեղերը կարող են օգնել ցավի, ջերմության և գլխացավի դեպքում:

Ե՞րբ զանգահարել ձեր բժկին

Կապ հաստատեք ձեր բժշկի հետ, եթե՝

- Պատվաստանյութ ներարկված մասում կա կարմրություն կամ կոշտություն, որը վատթարանում է 24 ժամից հետո:
- Կողմնակի ազդեցություններն անհանգստացնում են կամ մի քանի օրից չեն անհետանում:



Հազվադեպ հանդիպող, լուրջ կողմնակի ազդեցություններ

Ալերգիկ հակաազդեցություններ

Ինչպես ցանկացած դեղորայքի դեպքում, հազվադեպ է պատահում, սակայն, հևարավոր է ունենալ լուրջ հակաազդեցություն, ինչպես օրինակ՝ շնչելու դժվարություն կամ խզզոց, ցան կամ բշտիկներ, կոկորդի կամ լեզվի այտուցվածություն: Քիչ է հավանական, որ դա կպատահի: Եթե դա պատահի, անհապաղ դիմեք բուժօգնության:

Միոկարդիտ և պերիկարդիտ

Pfizer, Moderna կամ Novavax պատվաստանյութերով պատվաստվելուց հետո կա միոկարդիտի (սրտամկանի բորբոքում) կամ պերիկարդիտի (սրտապարկի բորբոքում) շատ փոքր վտանգ: Դեպքերի մեծ մասը պատահում է 12-ից 39 տարեկան տղամարդկանց շրջանում: Սրա պատահելու հավանականությունը շատ փոքր է:

Անհապաղ դիմեք բուժօգնության, եթե ունեք հետևյալ ախտանիշներից որևէ մեկը.

- Ցավ կրծքավանդակում
- Հևոց
- Արագ սրտխփոցի, սրտի անկանոն կամ ուժեղ բաբախի զգացողություն


Բուժում ստացած միոկարդիտով և պերիկարդիտով հիվանդների մեծամասնության առողջական վիճակը բարելավվել է դեղորայքի և հանգստի միջոցով, և նրանց ինքնազգացողությունը լավացել է:

Ինչպե՞ս հայտնել կողմնակի ազդեցության մասին

Եթե պատվաստվելուց հետո ունենում եք հակազդեցություն (հնարավոր կողմնակի ազդեցություն), խնդրում ենք հայտնել VAERS-ին նույնիսկ եթե վստահ չեք, որ դա առաջացել է պատվաստանյութից: Պատվաստումների Բացասական Հետևանքների Մասին Հաղորդման Համակարգը (VAERS) վաղ նախագրւշացման համակարգ է, որը FDA-ն և CDC-ն օգտագործում են անվտանգության հնարավոր խնդիրները հայտնաբերելու համար: Հաղորդելու համար գանգահարեք 1-800-822-7967 կամ այցելեք vaers.hhs.gov: Խնդրում ենք նկատի ունենալ, VAERS-ը չի տրամադրում բժշկական խորհրդատվություն:

Ձեր հաջորդ դեղաչափի ընդունումը նշանակված է հետևյալ օրը կամ դրանից հետո.

___ / ___ / _____



Հնարավոր է, որ դուք կարիք ունենաք մեկից ավելի դեղաչափերի՝ կախված ձեր տարիքից, առողջական վիճակից և նախկինում ստացած պատվաստանյութից: Մանրամասների համար այցելեք cdc.gov/coronavirus/vaccine:

COVID-19-ից լավագույն պաշտպանության համար [ժամանակին ստացեք](#) ձեզ առաջարկվող դեղաչափերը:

Որտե՞ղ ստանալ ձեր հաջորդ դեղաչափը

Եթե հավելյալ դեղաչափերի կարիք ունեք, այցելեք ph.lacounty.gov/howtogetvaccinated կամ գանգահարեք Հանրային Առողջության Վարչության Չանգերի Կենտրոն **1-833-540-0473** համարով՝ ձեզ մոտիկ պատվաստման վայր գտնելու համար: Տեղեկատվությունը տարբեր լեզուներով հասանելի է 24/7՝ գանգահարելով 2-1-1: Հասանելի են նաև անվճար փոխադրմիջոցներ և տնային պատվաստում:

Տեղեկություններ թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց համար

Եթե ունեք միջին կամ խստորեն թուլացած իմունային համակարգ (օրինակ՝ արյան քաղցկեղ կամ քաղցկեղի դեմ ցանկացած բուժում, օրգանների փոխպատվաստում կամ որոշակի աուտոիմուն խնդիրներ), պատվաստումը կարող է այդքան էլ արդյունավետ չլինել: CDC-ն [խորհուրդ է տալիս](#) ստանալ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափեր: Խոսեք ձեր բժշկի հետ դեղաչափերի ընդունման լավագույն ժամանակի մասին՝ հիմնվելով վտանգների և ձեր բուժման ծրագրի վրա:

Պահեք ձեր պատվաստումների սպիտակ քարտն ապահով տեղում

Դա ձեր պատվաստումների պաշտոնական գրանցումն է: Լուսանկարեք կամ պատճենեք այն:

Պատվաստումների գրանցման քարտի թվային տարբերակը կարող եք ձեռք բերել այստեղ՝ myvaccinerecord.cdph.ca.gov

Ձեռնարկեք քայլեր՝ COVID-19-ից պաշտպանվելու և տարածումը կանխելու համար

- ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ** կանխում են ծանր հիվանդանալը
- ԴԻՄԱԿ ԿՐԵԼԸ** կանխում է վիրուսի տարածումը
- ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ** թույլ է տալիս ձեզ իմանալ՝ արդյոք վարակված եք և արդյոք կարիք ունեք մեկուսանալու
- ԴԵՂԱՄԻջՈՑՆԵՐԸ** օգնում են կանխել ծանր հիվանդանալը, եթե դուք վարակված եք

Դեղամիջոցներ COVID-19-ը բուժելու համար

Եթե դուք վարակվում եք COVID-19-ով և գտնվում եք ծանր հիվանդանալու [ավելի բարձր վտանգի](#) խմբում, կան COVID-19-ը դեղամիջոցներ, որոնք կարող եք ընդունել և որոնք կօգնեն ձեզ չհայտնվել հիվանդանոցում:

Մի՛ հետաձգեք: Բուժումը պետք է սկսել ախտանիշների հայտնվելուց հետո որքան հնարավոր է շուտ: Ավելին իմանալու համար այցելեք ph.lacounty.gov/covidmedicines:

